

## Հնդհանուր հավասարակշռությունը

Տնտեսական քաղաքականությունը թեպետ բազմաթիվ նպատակներ է հետապնդում, սակայն դրանց թվում առանձնակի կարևորվում են չորսը՝ (1) ներքին հավասարակշռությունը, (2) արտաքին հավասարակշռությունը, (3) կայուն տնտեսական աճը, (4) եկամտների հավասարաչափ բաշխումը:

Ներքին հավասարակշռությունը ենթադրում է լրիվ զբաղվածություն և գնաճի ցածր մակարդակ: Իսկ արտաքին հավասարակշռությունը ենթադրում է վճարային հաշվեկշռի հավասարակշռություն: Քանի որ ներքին հավասարակշռությունն ուղղակիորեն առնչվում է ընտրողների եկամտների հետ, ապա կառավարությունները, սովորաբար, առավելությունը տալիս են ներքին, ոչ թե արտաքին հավասարակշռությանը:

Կարճատև ժամանակաշրջանում ներքին ու արտաքին հավասարակշռության հասնելու համար կառավարություններն ունեն երկու հիմնական գործիք՝ ծախսերը փոխող և ծախսերը փոխանցող:

Ծախսերը փոխող գործիքը ներառում է ֆիսկալ և մոնետար քաղաքականությունները:

Ֆիսկալ քաղաքականությունն ընդգրկում է պետական գնումների և հարկերի փոփոխությունը: Մասնավորապես՝ ֆիսկալ ընդլայնման դեպքում կառավարությունն ընդլայնում է հանրային գնումները և կամ կրճատում է հարկերը: Արդյունքում՝ եկամուտը բազմարկչի էֆեկտով աճում է: Եկամտի աճն, իր հերթին, ընդլայնում է ներմուծումը՝ ազդելով արտաքին հավասարակշռության վրա:

Իսկ մոնետար քաղաքականությունն ընդգրկում է փողի առաջարկի փոփոխությունը, ինչն ազդում է տոկոսադրույքի վրա: Մասնավորապես՝ ընդլայնող մոնետար քաղաքականության դեպքում կհի մեծացնում է փողի առաջարկը, ինչից տոկոսադրույքը նվազում է: Արդյունքում՝ ներդրումներն ընդլայնվում են, ինչը բազմարկչի էֆեկտով ընդլայնում է եկամուտը: Ներդրումների ու եկամտի աճը բերում են ներմուծման աճին՝ դարձյալ ազդելով արտաքին հավասարակշռության վրա: Ավելին, տոկոսադրույքի կրճատման հետևանքով կապիտալն արտահոսում է կամ կապիտալի ներհոսքը կրճատվում է:

Ծախսերը փոխանցող գործիքը ներառում է փոխարժեքի փոփոխությունը: Այսպես՝ ազգային արժույթի արժեզրկման դեպքում արտահանումն էժանանում է, ներմուծումը՝ թանկանում: Արդյունքում՝ և՛ տեղական, և՛ օտարերկրյա սպառողների ծախսերն արտասահմանյան ապրանքներից փոխանցվում են դեպի տեղական ապրանքները: Ծախսերի փոխանցման հետևանքով ընթացիկ հաշիվը բարելավվում է:

Միևնույն ժամանակ, զուտ արտահանման աճը բազմարկչի էֆեկտով ընդլայնում է եկամուտը, որն, իր հերթին, ընդլայնում է ներմուծումը՝ դրանով իսկ մասամբ չեզոքացնելով արժեզրկման բարերար ազդեցությունն ընթացիկ հաշիվ վրա:

\* \* \*

Երկրորդ աշխարհամարտից հետո մինչև 1973թ միջազգային արժույթային համակարգը ֆիքսված փոխարժեքների համակարգ էր: Դրաբար ֆիքսված էր ոսկու նկատմամբ, իսկ


մյուս արժույթները ֆիքսված էին դոլարի նկատմամբ: Միայն «Ֆունդամենտալ անհավասարակշռության» դեպքում երկրները կարող էին արժեզրկել կամ արժևորել իրենց արժույթները, այն էլ միայն Արժույթի միջազգային հիմնադրամի հավանության մեջ:

Ու քանի որ երկրները պարտավորվել էին ֆիքսված պահել փոխարժեքները, ապա պարտավոր էին ապահովել արտաքին հավասարակշռություն: Վերջինն անհրաժեշտ էր արտարժույթի շուկան հավասարակշռելու և հետևաբար՝ արժևորման կամ արժեզրկման անհրաժեշտությունը բացառելու համար:

Արդյունքում՝ 1950-60-ականներին ներքին և արտաքին հավասարակշռությունների միաժամանակյա ապահովման խնդիրը նշանակալի տեղ էր զբաղեցնում տնտեսագիտական գրականությունում: Թրեյոր Սվանի սխեման այդ խնդրի լուծման սխեմատիկ նկարագրությունն է:

**Գծանկար 17-Ճ1:**  
Սվանի սխեման

€ իրական փոխարժեքն է:  
A իրական կլանումն է, այսինքն՝ սպառման, ներդրումների և կառավարության ծախսերի հանրագումարը:



Սվանի սխեմայում (գծ. 17-Ճ1) ուղղահայաց առանցքն արտահայտում է իրական փոխարժեքը: Առանցքով վեր ազգային արժույթն արժեզրկվում է, և երկրի արտաքին մրցունակությունը բարելավվում է: Առանցքով վար ազգային արժույթն արժևորվում է:

Հորիզոնական առանցքն արտահայտում է իրական կլանումը՝ սպառման, ներդրումների և կառավարության ծախսերի հանրագումարը:

ՆՀ գրաֆիկը պատկերում է փոխարժեքի և կլանման այն արժեքները, որոնց դեպքում տեղի ունի ներքին հավասարակշռությունը: Գրաֆիկը վարընթաց է, քանի որ ազգային արժույթի արժևորման (առանցքով վար) դեպքում զուտ արտահանումը կրճատվում է (համարում ենք՝ Մարշալ-Լեոներ-Ռոբինսոնի պայմանը տեղի ունի), ու հետևաբար՝ լրիվ զբաղվածության վերականգման համար անհրաժեշտ է, որ կլանման ծախսերն աճեն:

ՆՀ-ից աչ տեղի ունի գնաճ, քանի որ տրված փոխարժեքի համար ներքին համախառն ծախսերն ավելին են, քան բավարար է լրիվ զբաղվածության համար: ՆՀ-ից ձախ տեղի ունի գործազրկություն, քանի որ ներքին պահանջարկը բավարար չէ լրիվ զբաղվածությունն ապահովելու համար:

ԱՀ գրաֆիկը պատկերում է արտաքին հավասարակշռությունը: Այն վերընթաց է, քանի որ ազգային արժույթի արժեզրկման (առանցքով վեր) դեպքում զուտ արտահանումն աճում է, ու հետևաբար՝ ընթացիկ հաշվի ավելցուկը չեզոքացնելու համար անհրաժեշտ է, որ համախառն ազգային ծախսերն աճեն՝ հակակշռող ներմուծում պայմանավորելու համար:

ԱՀ-ից աջ ներքին ծախսերն ավելին են, քան բավարար է ընթացիկ հաշիվը հավասարակշռելու համար, և ընթացիկ հաշիվը պակասորդով է: Իսկ ԱՀ-ից ձախ ընթացիկ հաշիվը ավելցուկով է:

Երկու գրաֆիկների հատման կետում տնտեսությունն ընդհանուր հավասարակշռության վիճակում է:

Այսպիսով՝ Սվանի սխեման տարանջատում է տնտեսության «դժբախտ» վիճակի շորս տարբերակ՝

- 1) ընթացիկ հաշվի պակասորդ և գնաճ,
- 2) ընթացիկ հաշվի պակասորդ և գործազրկություն,
- 3) ընթացիկ հաշվի ավելցուկ և գործազրկություն,
- 4) ընթացիկ հաշվի ավելցուկ և գնաճ:

Ընդհանուր հավասարակշռությունը վերականգնելու համար անհրաժեշտ քաղաքականությունը կախված է նրանից, թե «դժբախտություն» որ տարբերակում է տնտեսությունը գտնվում:

Ենթադրենք տնտեսությունը *a* կետում է, այսինքն՝ տեղի ունի գնաճ և ընթացիկ հաշվի պակասորդ: Եթե *b* վարում է ֆիքսված փոխարժեքի քաղաքականություն, ապա կառավարությունը պետական գնումների կրճատման (ֆիսկալ սահմանափակման) միջոցով կարող է վերականգնել կա՛մ ներքին, կա՛մ արտաքին հավասարակշռությունը: Մասնավորապես՝ մինչև *b* կետ ծախսերի կրճատման դեպքում ներքին հավասարակշռությունը կվերականգնվի, սակայն ընթացիկ հաշվի պակասորդը կպահպանվի: Իսկ մինչև *c* կետ ծախսերի կրճատման դեպքում արտաքին հավասարակշռությունը կվերականգնվի, սակայն զբաղվածության մակարդակը կնվազի:

Հակառակ դեպքում, եթե *b* արժեզրկի արժույթը՝ առանց պետական գնումների կրճատման, ապա տնտեսությունը կտեղափոխվի *d* կետ, որում գնաճն ավելի կարվի, թեպետ արտաքին հավասարակշռությունը կվերականգնվի:

Այսինքն՝ ներքին և արտաքին հավասարակշռությունները միաժամանակ վերականգնելու համար երկիրը տվյալ դեպքում պետք է ծախսերի սահմանափակումը զուգորդի արժույթի արժեզրկման հետ:

Այն, որ քաղաքականության որևէ թվով նպատակների իրագործման համար անհրաժեշտ են առնվազն նույնքան թվով գործիքներ, հիմնավորել է Նոբելյան մրցանակակիր Յան Թինբերգենը: Դա հայտնի է «Թինբերգենի կանոն» անվամբ: Տվյալ դեպքում երկու նպատակների՝ ներքին և արտաքին հավասարակշռությունների վերականգնումը հնարավոր էր իրագործել երկու գործիքների կիրառմամբ:

Սվանի սխեմայի թերությունն այն է, որ չի դիտարկում կապիտալի հոսքերը և չի տարանջատում ֆիսկալ ու մոնետար քաղաքականությունների ազդեցությունը: Այս խնդիրները լուծված են Մանդել-Ֆլեմինգի մոդելում:

Սվանի աղյուսակում, եթե երկիրը սկզբնապես *a*-ում է և վարում է ֆիքսված փոխարժեքի քաղաքականություն, ապա ստացվում է, որ ոչ մի կերպ չի կարող վերականգնել ընդհանուր հավասարակշռությունը: Մանդելը և Ֆլեմինգը ցույց տվեցին, որ նույնիսկ ֆիքսված փոխարժեքի դեպքում երկիրը կարող է վերականգնել ընդհանուր հավասարակշռությունը ֆիսկալ և մոնետար քաղաքականությունների զուգորդման միջոցով: